կոմիսարները որոշեցին փակել կրկէսը:

* * *

Օրերով, շաբաթներով, դռնէ դուռ ընկած դատարանից կոմիսարիատ, կոմիսարիատից Զեկա, Զեկայից պրոֆմիութիւն, կրկէսի խեղճ արտիստները, այլեւս թափթփված, կուչ եկած, անօթի, մաշեցին բոլոր շէմերը, երկար թղթեր գրեցին, լացին, աղաչեցին: Պաշտօնեաները քթի տակ ինչ որ բան էին մրմռում, խոստանում, միշտ խոստանում. «Վերադարձէք եկող շաբաթ, մի բան կ'անենք»:

Վերադառնում էին եկող շաբաթ, եւ նոյն խոստումները կրկնւում էին:

Հեռաւոր հիւսիսից եկած այդ մարդիկ, օտար եւ անհիւրընկալ այս երկրում, լեզուին անծանօթ, թշնամիներով շրջապատուած, ընկել էին մի քանի վաշխառուների ձեռքը, որոնք իրենց փողը յետ էին պահանջում, իրերի եւ խողի վրայ արգելք էին դրել ու չէին թողնում որ մեկնեն:

Ցրտին, բուքին, պատերի տակ քաշքշուելով, գլուխները կախ, ձեռքերը ետեւին ծալած, խողի տէրը ման էր գալիս փողոցի փողոց, գետինը ծխախոտի կտորներ փնտռում, գուցէ լաւաշի վայր ընկած մի կտոր:

Անօթի էին՝ ինքն էլ, խողն էլ:

Խողը օրէ օր նիհարում էր: Քիթը խոթում էր չսիրած ցեխի մէջ, տրորում՝ ոչինչ չկար: Միշտ լուռ, միշտ խմաստուն ու հեզ՝ նա պառկում ու վեր էր կենում, պտտում սենեակի մէջ, սպասում... Երբեմն ներս էր մտնում իր տէրը, խողը վազում էր դէպի նրան, յոյսով որ մի բան պիտի բերէ: Աւելորդ յոյս, տէրը նըստում էր մօտը, ժամերով մտածում, արցունքը սրբում...

Էլ մարդ չէր գալիս խողին նայելու: Վախում էին: Իշխանութիւնը արգիլել է:

Խողը սկսեց ճչել: Գլուխը զարկում էր պատերին, թաւալ գալիս, փորձում դուռը բանալ, դուրս նետուել՝ անկարելի բան ... Նա կերել էր գետինը վայր ընկած թղթի կտորները, պատռտած ցնցոտիները, ծամել փայտը ու այժմ ճչում էր: Գիշերը փողոցից անցնողները սարսռում էին, իրենց քայլերը արագացնում, փախչում որ չլսեն: Տէրը, դռնէ դուռ ընկած, աղաչում էր. «Սպաննեցէք, մի՛ չարչարէք խեղճ խողին, սպաննեցէք»...

Դատարանը պէտք է որոշէր: «Սպասեցէ՛ք: Վերադարձէք եկող շաբաթ»...

Ու դատարանը որոշեց:

Մի գիշեր, մութ, անդղի աչքերով մարդիկ, եկան խողին տարին ու կեղտոտ մի բակի մէջ մորթեցին:

Փորը ճեղքուած, գլուխը կտրած, տառապանքից կարմրած մսերը ցցուած, երկար ժամանակ խողի մարմինը խաչեցին մայրաքաղաքի մեծ փողոցի դռան վրայ:

Ոչ ոք այդ միսը չդնեց:

Հիմա ղրկել են Թիֆլիս ապուխտ չինելու համար:

(Շարունակելի)

ԽԵՆԹ ՍԷՐ

Իմ սէրը նրման է՝
Կապոյտ կամարի ոսկի ջահերուն.
Անթիւ անհամար արծաթ կանթեղներ,
Սրտիս կամարին վրայ են շարուեր.
Կը փայլին, ժըպտին, կ'երգեն, կ'երազեն՝
Նաշխուն աչուկներն սրտիս կամարէն.
Բայց օր ալ կ'ըլլայ անոնք կը մեռնին,
Եւ ես սրգաւոր, մռայլ հոգիով
Կուլամ խենթի պէս...

Իմսէրը նրման է՝
Բարի ծովերու սնդուս տարազին.
Շատ անգամ սրտիս ջուրերուն լազուարթ
Նաւակներ սահին երջանիկ զուարթ.
Արեւի վարսերն ալ, շրջմոլիկ պարով՝
Կ'իջնեն էուրեանս խորքը հոգեթով:
Բայց օր ալ կ'ըլլայ ո՛չ արեւ կուգայ,
Ո՛չ լուսին կ'ելլէ, ու ես միս միանակ՝
Փոթորկած սրտով, կուլամ խենթի պէս...

Իմ սէրը նրման է՝
Անրման սէրերու անշէջ բոցերուն.
Իմ սիրտը կ'ուզէ սիրել, մի՞շտ սիրել...
Բարի հոգիով, բընիոյշ գգուանքով.
Բայց օր ալ կ'ըլլայ, իմ սէրը սաստիկ՝
Շանթ ու բոց եղած, խենթ մրտածումով,
Կ'ուզէ սպաննել, արիւնը թափել,
Սիրած տղային...

Ն. ՏԷՐ ՄԻՔԱԷԼԵԱՆ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան